

ՈՐՎՔԵՐ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԻՆՔ

Ձեր հարցերի պատասխանները տրանսգենդեր անձանց,
գենդերային ինքնության և գենդերային ինքնարատահայտման վերաբերյալ



«Իրավունքի կողմ»
իրավապաշտպան
հասարակական
կազմակերպություն

ՆԱԽԱԲԱՆ	3
ԱՐԴՅՈ՞Ք ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԻՆԵԼԸ ՀՈԳԵԿԱՆ	
ԽԱՆԳԱՐՈՒՄ Է.....	4
Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԻՆՔ.....	4
Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՏՐԱՆՍՎԵՍՏԻՏ/ՀԱԳՈՒՄՏԱՓՈԽ ԱՆՁԻՆՔ.....	5
ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԳԵՆԴԵՐԻՆ	
ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	9

Սույն գրքույկը պատրաստվել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, աստելության հիմքով կատարվող հանցագործությունների և աստելության խոսքի զոհերի համար» ծրագրի աջակցությամբ, որը ֆինանսավորվում է Եվրամիության և Եվրախորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման II ծրագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը չի կարող որևէ կերպ ներկայացվել որպես Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի տեսակետ:



ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ-ում) տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելություն պարունակող և տարածող խոսքը դարձել է անհանդուրժողականության և այլատյացության ամենատարածված ձևերից մեկը, և դրա հիմնական պատճառն այն է, որ հասարակությունը տրանսգենդեր անձանց վերաբերյալ բավարար գիտելիքներ չունի:

Նվաստացնող և վիրավորական կարծիքների տարածումը նպաստում է տարբեր համայնքների և սոցիալական խմբերի, ներառյալ տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության ու բռնության դեպքերի թվի աճին: Արդյո՞ք մենք պետք է թույլ տանք, որ ատելության խոսքը խոսքի ազատության ներքո քողարկող անձինք բառերով հալածեն հասարակության որոշակի խմբերի, արդյո՞ք նրանց թույլատրվում է վերարտադրել ծայրահեղականների բռնի լեզուն: Որոշ զարգացող և արդեն զարգացած ժողովրդավար երկրները կասկածներ չունեն այս հարցի վերաբերյալ, նրանք ընդունել են օրենքներ և կանոնակարգեր, որոնք արգելում են տրանսֆորմացիայի և ատելության կամայական այլ դրսևորման արտահայտումը:

Տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության խոսքը հավասարակշռելու համար անհրաժեշտ է, որ հասարակությանը ճշգրիտ տեղեկատվություն տրվի գենդերի և սեռականության վերաբերյալ:

Հաշվի առնելով սեռականության և գենդերային հարցերի վերաբերյալ որակյալ նյութերի բացակայությունը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն մշակել է այս գրքույկը՝ զարգացնելու հասարակության լայն շերտերի գիտելիքները սեռականության և գենդերի վերաբերյալ և խորացնելու սեռական ու գենդերային փոքրամասնությունների մասին շահագրգիռ կողմերի՝ նյութեր պատրաստելու հմտությունները: Այս գրքույկում ներկայացված են սեռականությանը և գենդերին վերաբերող հիմնական եզրույթներն ու հասկացությունները՝ ըստ թեմատիկ բաժինների:

Հույս ունենք, որ այս գրքույկը կկիրառվի հասարակության լայն շերտերի, որոշումներ կայացնողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, տեղական Կազմակերպությունների կողմից, և որ այն կտարածվի համացանցում՝ նպաստելով ատելություն պարունակող և քարոզող խոսքի նվազեցմանը և տրանսգենդեր անձանց իրավունքների ամրապնդմանը ՀՀ-ում:

ԱՐԴՅՈ՞Ք ՏՐԱՆՍՊԵՆԴԵՐ ԼԻՆԵԼԸ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է

Հոգեբանական վիճակը հոգեկան խանգարում է համարվում միայն այն դեպքում, եթե դա տառապանքի կամ անաշխատունակության պատճառ է հանդիսանում: Տրանսգենդեր անձինք չեն զգում, որ իրենց գենդերային ինքնությունն առաջացնում է տառապանք կամ անաշխատունակության, ինչը նշանակում է, որ տրանսգենդեր լինելը հոգեկան խանգարում, հոգեբանական կամ սոցիալական խնդիր չէ¹:

Խարանի, խտրականության ու բռնության պատճառով տրանսգենդեր անձանց համար շատ հաճախ կարևոր է սոցիալ-հոգեբանական աջակցություն ստանալը, ինչպես նաև բժիշկների հսկողության տակ գտնվելը՝ հորմոնալ բուժման կամ բժշկական այլ միջամտությունների կարիքներից ելնելով: Կարծրատիպերը, ծաղրանքը, բռնությունն ու անարգանքը կարող են հանգեցնել տառապանքների և հոգեբանական խնդիրների: Սա էլ պատճառ է հանդիսանում, որ մեր հասարակությունում տրանսգենդեր անձինք ավելի հաճախ են տառապում դեպրեսիայով և նույնիսկ ինքնասպանության փորձեր են անում:

«Կարևոր է հիշել՝ թեկուզ և գենդերային ինքնությունը պայմանավորված է մարդու հոգեբանական աշխարհով, այնուամենայնիվ, կին, տղամարդ կամ տրանսգենդեր լինելը չի կարող լինել խանգարում կամ շեղում: Մենք համոզված ենք, որ անկախ մարդու գենդերային ինքնությունից և հոգեբանական ներքին աշխարհից, մարդկային շփման համար փոխըմբռնումը կարևոր պայման է» - Լիլիթ Մարտիրոսյան, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ:

Ո՞ՎԵՐ ԵՆ ՏՐԱՆՍՊԵՆԴԵՐ ԱՆՁԻՆՔ

Տրանսգենդեր եզրույթը ընդհանրացնող տերմին է բոլոր այն անձանց համար, ում գենդերային ինքնությունը տարբերվում է իրենց կենսաբանական սեռից: Այն ներառական է մի շարք ոչ նորմատիվ գենդերային ինքնությունների և արտահայտումների համար և ներառում է տրանսսեքսուալ կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, տրանսվեստիտ/հագուստափոխ անձանց համար²:

Ո՞ՎԵՐ ԵՆ ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒՎԱԼ ԱՆՁԻՆՔ

Տրանսսեքսուալ անձինք համարվում են տրանսգենդեր, բայց սա ավելի հին և բժշկական եզրույթ է, որը նախընտրելի է որոշ մարդկանց կողմից, ովքեր անցնում են կամ անցել են հորմոնալ թերապիա, կատարել են սեռափոխման վիրահատություն կամ մտադիր են

¹World Health Organization. ICD-11 Beta Draft (Mortality and Morbidity Statistics). հասանելի է՝ <http://apps.who.int/classifications/icd11/browse/l-m/en>

²ILGA-Europe Glossary. հասանելի է՝

http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

ստանալու սեռափոխման համար անհրաժեշտ բժշակական միջամտություններ³ : Այանքի այն ժամանակահատվածը, երբ մարդիկ ստանում են տարատեսակ բժշկական միջամտություններով իրենց կենսաբանական սեռը գենդերային ինքնությանը համահունչ դարձնելու համար, կոչվում է սեռափոխման փուլ: Անձը, ով ծնվում է իգական, բայց փոխել է, փոխում է կամ մտադիր է փոխել իր մարմինը, այն «առավել արական» դարձնելու համար, համարվում է տրանսսեքսուալ տղամարդ կամ կրճատ՝ տրանս տղամարդ, իսկ հակառակ դեպքում՝ տրանսսեքսուալ կին կամ կրճատ՝ տրանս կին⁴:

Տեղեկացնենք, որ 2019 թ. -ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հիվանդությունների դասակարգչի թարմացված տարբերակում (ICD-11) հեռացրել է տրանսսեքսուալությունը հոգեկան առողջությանը վերաբերող հիվանդությունների շարքից: Այսպիսով, այն տեղափոխվել է «Հոգեկան և վարքային խանգարումներ» գլխից՝ «Սեռական առողջության վիճակներ» բաժին: Այնուամենայնիվ, ՀՀ հիվանդությունների վիճակագրական դասակարգչի մեջ տրանսսեքսուալությունը նշված է որպես հիվանդություն, որը ներառված է F64.0 դասում և բնութագրվում է որպես հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

ՈՎՋԵՐ ԵՆ ՏՐԱՆՍՎԵՍԻՏ/ՀԱԳՈՒՍՏԱՓՈԽ ԱՆՁԻՆՔ

Տրանսվեստիտ անձը նախընտրում է հագուստափոխ լինել և ժամանակ առ չամանակ կամ էլ հաճախակի հագնել այլ գենդերին բնորոշ կամ վերագրվող հագուստ⁵

«Հարկ է հիշել, որ կան անհատներ, ովքեր սեռափոխվելուց կամ հորմոնալ թերապիա անցնելուց հետո չեն ցանկանում կոչվել տրանսսեքսուալ, կամ հագուստափոխ անձինք չեն ցանկանում համարվել տրանսգենդեր կամ տրանսվեստիտ: Ոմանք ցանկանում են լինել ուղղակի կին, տղամարդ կամ ագենդեր են: Ոմանք էլ տհաճ է իրենց բժշկական միջամտությունների կամ սեռական օրգանների մասին խոսելը: Ուստի, մենք համոզված ենք, որ անկախ մարդու կյանքում ունեցած բժշկական միջամտությունների քանակից ու տեսակից, յուրաքանչյուր անհատ արժանի է հարգանքի և արժանապատիվ կյանքով ապրելու իրավունք ունի» - Լիլիթ Մարտիրոսյան, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ:

³ILGA-Europe Glossary. հասանելի է՝

http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

⁴American Psychological Association. (2015). Guidelines for Psychological Practice with Transgender and Gender Nonconforming People. հասանելի է՝

<http://www.apa.org/practice/guidelines/transgender.pdf>

⁵ILGA-Europe Glossary. հասանելի է՝

http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

ՄԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՆԴԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵԶՐՈՒՑԹՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսելով մարդու կենսաբանական սեռի մասին՝ անհրաժեշտ է նշել, թե **սեռական տարբերակման** որ մակարդակն է դիտարկվում:

Ըստ այդմ, դիտարկում են՝

գենետիկական սեռ, որը բնորոշվում է մարդու քրոմոսոմային հավաքակազմով և լինում է XX (իգական), XY (արական), ինչպես նաև հնարավոր են միջանկյալ տարբերակներ՝ XXY (ինտեր-աղջիկ) և XYY (ինտեր-տղա),

գոնադային սեռ, որը բնորոշվում է սեռական գեղձերի առկայությամբ, որոշիչ է սերմնարանի կամ ձվարանի առկայությունը, սակայն հնարավոր է նաև երկու գեղձերի միաժամանակյա առկայություն,

անատոմիական սեռ, որը բնորոշվում է մարդու արտաքին կամ ներքին սեռական օրգանների առկայությամբ,

մանկաբարձական սեռ, որը պտղի սեռն է և բնորոշվում է մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից՝ համաձայն հղի կնոջ կլինիկական զննումների,

ծննդյան սեռ, որը նորածնի սեռն է, բնորոշվում է ծնունդն ընդունող մանկաբարձի կամ գինեկոլոգի կողմից,

հորմոնային սեռ, որը բնորոշվում է անձի սեռական գեղձերի կողմից արտադրվող սեռական հորմոնների քանակական և երկրորդային սեռական հատկանիշների առկայությամբ (հաճախ հորմոնային խանգարումները անձի հորմոնային սեռի և անատոմիական սեռի տարբերության պատճառն են),

անձնագրային սեռ կամ անձի փաստաթղթերում նշված սեռ, որը կարող է չհամընկնել ծննդյան սեռի հետ,

հոգեբանական սեռը որոշվում է անձի՝ որևիցե սեռին պատկանելու ինքնագզացողությամբ և սեռական նույնականացմամբ: Հնարավոր են դեպքեր, երբ մարդու սեռական նույնականացումը չի համընկնում նրա կենսաբանական սեռի կամ սեռերից ոչ մեկի հետ: Այս մարդիկ կոչվում են անդրոգեններ: Նման նույնականացում կարող է դիտարկվել նաև անձի սոցիալական սեռի որոշման դեպքում,

անձի **սոցիալական** սեռը կամ գենդերն աշխարհագրական, էթնիկ, սոցիալական և պատմամշակութային նորմերի վրա հիմնված սեռի ավանդական տարանջատումն է արականի և իգականի:

American Psychological Association. (2015). Guidelines for Psychological Practice with Transgender and Gender Nonconforming People, <http://www.apa.org/practice/guidelines/transgender.pdf>
Hughes leuan A. (1 August 2001): «Minireview: Sex Differentiation»: Endocrinology <https://academic.oup.com/endo/article/142/8/3281/2988779>

Գենդերն անձի սոցիալական սեռն է, աշխարհագրական, էթնիկ, սոցիալական և պատմամշակութային նորմերի վրա հիմնված ավանդական տարանջատումն է արականի և իգականի⁸: Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները: Սակայն, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սեռական դասակարգումների հետ:

Գենդերային ինքնությունը մարդու ներքին ինքնագգացումն ու ինքնարնկալումն է որպես այս կամ այն գենդերին պատկանելու, այսինքն որպես կին, տղամարդ տրանսգենդեր և այլն⁹:

Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները: Սակայն, ինչպես նշվեց, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սեռական դասակարգումների հետ

Ցիսգենդեր - այն անձն է, որի գենդերային ինքնությունը և ինքնարտահայտումը համապատասխանում է ծննդյան ժամանակ հաստատված սեռին, բնորոշում է իր գենդերի հետ կապված սոցիալակն սպասելիքներին:

Տրանսգենդեր - այն անձն է, որի գենդերային ինքնությունն ու ինքնարտահայտումը տարբերվում են նրա սեռի վրա հիմնված ավանդական գենդերային դերերից:

Երկգենդեր - այն անձն է, որը կարող է իրեն նույնականացնել որպես երկու կամ ավելի գենդերային ինքնություններ ունեցող, չունենալ կամ չնույնականանալ որևէ գենդերային արտահայտման հետ¹⁰:

Ագենդերներ - մարդիկ, ովքեր սովորաբար խուսափում են որևէ գենդերային ինքնության հետ ասոցացվելուց:

Սեռական կողմնորոշվածությունը մարդու սեռական չորս բաղադրյալներից մեկն է: Դա մարդու մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեռական ցանկության հակումներն են որոշակի սեռի/գենդերի անձանց հանդեպ: Ընդունված է համարել, որ գոյություն ունեն սեռական կողմնորոշվածության չորս տեսակներ՝ տարասեռական, նույնասեռական, երկսեռական և անսեռական¹¹:

ՀՀ հիվանդությունների վիճակագրական դասակարգչի¹² մեջ հստակ նշված է, որ մարդու սեռական կողմնորոշվածությունը չի համարվում հիվանդություն: Բացի այդ, սեռական կողմնորոշվածությունը պետք չէ նույնականացնել գենդերային ինքնության հետ:

⁸ILGA-Europe Glossary, հասանելի է՝ http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

⁹ILGA-Europe Glossary, հասանելի է՝ http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

¹⁰ILGA-Europe Glossary, հասանելի է՝ http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

¹¹American Psychological Association. Answers to Your Questions For a Better Understanding of Sexual Orientation & Homosexuality, հասանելի է՝ <http://www.apa.org/topics/lgbt/orientation.pdf>

¹²Հայաստանի Հանրապետության հիվանդությունների դասակարգիչ, ՀՂ-007.1-2003, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=18923>

Այսպիսով, տրանսգենդեր անձինք կարող են լինել թե՛ տարասեռական, թե՛ նույնասեռական, թե՛ ունենալ այլ սեռական կողմնորոշվածություն:

Տարասեռական կողմնորոշվածություն՝ անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության արատահայտումն է հակառակ գենդերի ներկայացուցչի նկատմամբ¹³:

Երկսեռական կողմնորոշվածություն՝ անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության արտահայտումն է իգական և արական գենդերային ինքնություն ունեցող անձանց նկատմամբ¹⁴:

Նույնասեռական կողմնորոշվածություն՝ անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեռական ցանկության արտահայտումն է իր գենդերի ներկայացուցչի նկատմամբ¹⁵:

ԱՆսեռականություն անձի մոտ սեռական կողմնորոշվածության և սեռականության ցանկացած դրսևորումների բացակայությունն է:

Հարկ է նշել, որ **հետերոնորմատիվություն**¹⁶ աշխարհընկալում է, երբ տարասեռականությունը հասկացվում է որպես մարդու սեռական կյանքի սոցիալական նորմ: Այս երևույթը բացասաբար է անդրադառնում նույնասեռական և երկսեռական անձանց կյանքի որակի վրա:

Sexualities (2003). Special issue on Polyamory – Call for contributors. Sexualities.

ILGA-Europe Glossary, հասանելի է՝

http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

ILGA-Europe Glossary, հասանելի է՝

http://ilga-europe.org/sites/default/files/ilga-europe_glossary_final_170714_www.pdf

Halperin, D. M. (1995). Saint Foucault : towards a gay hagiography. New York ; Oxford: New York ;

Oxford : Oxford University Press Doan, L. (2013). Disturbing practices :history, sexuality, and women’s experience of modern war:

Chicago, Illinois : The University of Chicago Press Sullivan, N. (2003). Queer : A question of being or a question of doing?

In: Sullivan, N. (ed.) A critical introduction to queer theory. New York: New York University Press

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է խուսափել տրանսգենդեր համայնքին ԼԳԲ համայնքի հետ նույնականացնելուց, քանի որ տրանսգենդեր անձինք բախվում են խնդիրների իրենց գենդերային իքնության, այլ ոչ թե սեռական կողմնորոշվածության հիմքով:

Տրանսգենդեր անձանց վերաբերյալ սխալ և իրականությանը չհամապատասխանող նյութերը խթանում են տրանս անձանց իրավունքների ոտնահարումը ՀՀ-ում:

Տրանսֆոր ծայրահեղականները հաճախ պնդում են, որ տրանսգենդեր անձինք պահանջում են հատուկ իրավունքներ, որոնք խաթարում են իրենց արժանապատիվ կյանքը: Մակայն, պետք է հիշել, որ մարդու իրավունքները ստանդարտներ են, որոնք ընդունում են բոլոր մարդկային էակների արժանապատվությունը և պաշտպանում են այն: Մարդու իրավունքները համընդհանուր են բոլորի համար, հետևաբար, տրանսֆորիան անընդունելի է ցանկացած պարագայում:

Երևան, 2021թ.

«Իրավունքի կողմ» իրավասպաշտության հասարակական կազմակերպություն

Երևան, Հայաստանի Հանրապետություն

հեռ.՝ +37411880770

<http://rightsidenngo.com/> - [rightsidenngo@gmail.com](mailto:rightsidengo@gmail.com)